

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն տեղեկատվություն է ներկայացնում 2018 թվականի հունվար-հունիսի (այդ թվում՝ հունիսի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2018թ. հունիսի ամսական և 2018թ. հունվար-հունիսի (աճողական) արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները


	<i>Չափի միավոր</i>	2018թ. հունիս	2018թ. հունիսը 2017թ. հունիսի նկատմամբ, %	2018թ. հունիսը մայիսի նկատմամբ, %	2018թ. հունվար-հունիս	2018թ. հունվար-հունիսը 2017թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	109.6	112.4	x	108.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	<i>մլն.դրամ</i>	146 777.4	105.6	105.8	805 026.1	103.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	<i>մլն.դրամ</i>	89 450.2	114.0	216.1	269 749.2	105.5
Շինարարության ծավալը	<i>մլն.դրամ</i>	34 102.3	104.2	117.6	127 790.9	113.5
Առևտրի շրջանառությունը	<i>մլն.դրամ</i>	234 567.1	103.3	103.8	1 257 746.1	109.1
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	<i>մլն.դրամ</i>	151 073.5	121.2	108.4	777 770.7	118.1
Մպառողական գների ինդեքսը	%	x	100.9	98.4	x	102.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	<i>մլն.կՎտ.ժ</i>	615.1	110.9	107.8	3 852.8	101.5
Միջին ամսական անվանական աշխատավարձը*	<i>դրամ</i>	171 950	104.9	101.3	168 367	104.4
Արտաքին առևտրաշրջանառությունը	<i>մլն.դոլար</i>	593.7	115.7	99.1	3 476.1	128.9
	<i>մլրդ.դրամ</i>	286.5	x	x	1 675.7	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում	<i>մլն.դոլար</i>	199.4	106.7	111.1	1 165.2	120.0
	<i>մլրդ.դրամ</i>	96.2	x	x	561.6	x
ներմուծում	<i>մլն.դոլար</i>	394.3	120.8	93.9	2 310.9	133.9
	<i>մլրդ.դրամ</i>	190.3	x	x	1 114.1	x

* Այստեղ և հետագայում ամսական ցուցանիշները ներառում են նաև փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները, քանզի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2017թ-ի 1582-Ն որոշման համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեին հասանելի է դարձել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) տվյալների բազան ամսական կտրվածքով և տեղի է ունեցել տեղեկատվական աղբյուրի փոփոխություն (հետագայում՝ օգտագործվելու է տեղեկատվական նոր աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ-ի վարչական ռեգիստրի ամսական տվյալները): Մինչ տեղեկատվական աղբյուրի փոփոխությունը ամսական ցուցանիշները չէին ներառում փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները: Փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները հավաքագրվում էին տարին մեկ անգամ և արտացոլվում էին միայն տարեկան ցուցանիշներում:

Ստորև բերվում են գծանկարներ (ռադարներ), որոնք նկարագրում են ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները.

Ապրանքների և ծառայությունների արտադրության հիմնական ցուցանիշների փոփոխությունները 2018 և 2017թթ. հունիս ամիսներին

(նախորդ տարվա հունիսի նկատմամբ, %)



Ապրանքների և ծառայությունների արտադրության փոփոխությունները 2018 և 2017 թթ. հունվար-հունիսին

(նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %)

